կաղապարային միավորները՝ լինեն դրանք բառային, հոմանիշային, թե տեքստային, պատումային[28]:

Ուշագրավ է, որ Յոհան Հայզինգան նմանատիպ կաղապարները մեկնաբանում է մշակույթի մեջ խաղային տարրի գերակայության գործոնով. «Կարիք չկա հեռուն գնալ սրբերի լեգենդների մեջ՝ տեսնելու համար, որ հրաշքների պատմությունը կրկին ու կրկին ի հայտ է բերում իր անհերքելի խաղային տարրը»[29],- գրում է նա:

Կանոնիկ, կաղապարային են նաև վկայաբանությունների սյուժեներն ու սյուժետային զարգացումների մանրամասնությունները: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ վկայաբանությունների կառուցվածքի համար, ինչպես գրում է Քնարիկ Տեր-Դավթյանը՝ «հիմք հանդիսացան «իրական ակտերը», որոնք կրում էին զուտ դատական հետաքննության բնույթ՝ կազմված նահատակությանը նախորդող դեպքերի նկարագրությունից և մահապատժից»[30]: Ըստ ամենայնի՝ սյուժեի կաղապարային բնույթն է հետագայում թելադրել-պայմանավորել նաև մյուս կաղապարները: Ուշարժանն այն է, որ Դավրիժեցու պատմագրքում միմյանց հաջորդող վկայաբանություններից տեքստային ու բովանդակային առումով սերտ համընկնություններ են արձանագրում «Պատմութիւն նահատակութեան անմեղ մանկանն Նիկօղայոսի» և «Պատմութիւն նահատակութեան խոստովանող վկային Քրիստոսի սրբոյն Խաչատրոյ» վկայաբանությունները միմյանց հետ, իսկ «Պատմութիւն նահատակութեան Սիրուն անուամբ քրիստոնէին» և «Պատմութիւն նահատակութեան Մխիթար անուամբ քրիստոնէին» վկայաբանությունները՝ միմյանց հետ:

---

28 Առավել մանրամասն տե՛ս ***Д. С. Лихачев,*** Поэтика древнерусской литературы, էջ 125–128:

29 ***Յոհան Հայզինգա,*** Homo Ludens. Մշակութային խաղային տարրի սահմանման փորձ, Երևան, 2007, էջ 244:

30 ***Քնարիկ Տեր-Դավթյան,*** Վկայաբանություն և վարք, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, էջ 44: